ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **00090**
13 հունվար 2025թ.

«ՎԱԼ + ԱԼ » ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Խ. ՋԱՀԻՆՅԱՆԻՆ
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի գործընկերներ

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2023 թվականի սեպտեմբերի 1-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում՝ գնահատող հանձնաժողովի 24.10.2023 թվականին կազմած թիվ 2 արձանագրությամբընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ կոնսորցիումը, որի հետ 2023 թվականի նոյեմբերի 10-ին կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Տեղեկացնում ենք, որ Ընթացակարգի շրջանակում «Ստրոյ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի արդյունքում ԵԴ2/36956/02/23 դատական գործի շրջանակում Դատարանի կողմից որոշում է կայացվել «Ստրոյ-Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքապետարանի՝ բավարարել և պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել «Վալ+Ալ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և գնահատողի հանձնաժողովի 25.10.2023 թվականին հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի «8.3» կետը, սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Պայմանագիրը 2025 թվականի հունվարի 13-ից միակողմանի ամբողջապես լուծվել է:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676